ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2ապրիլի 2014 թվականի N 49-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2014թ. մարտի 24-ի <<Քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելուն և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում փոփոխություններ կատարելուն համաձայնություն տալու մասին>> N 242-Ա որոշումը, **ո ր ո շ ու մ եմ՝**

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետի և գլխավոր մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնների (ծածկագրեր՝ 68-2.2-34, 68-3.1-17) անձնագրերը՝ համաձայն N 1,N2 հավելվածների:

2.Աշխատակազմի ղեկավարի տեղակալի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 68-1.2-1) անձնագրի 11-րդ կետից հանել <<ժ>>, <<ժա>>, <<ժբ>>, <<ժգ>>, <<ժդ>>, <<ժե>>, <<ժզ>>, <<ժէ>>, <<ժը>>, <<ժթ>> ենթակետերը:

3.Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի՝

1) առաջատար մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 68-3.3-7) անձնագրի 5-րդ կետը շաադրել հետևյալ խմբագրությամբ.

<<5. Բաժնի առաջատար մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը:

Բաժնի առաջատար մասնագետը Բաժնի գլխավոր մասնագետներից մեկի կամ Բաժնի առաջին կարգի մասնագետի բացակայության դեպքում փոխարինում է նրանց>>.

2) առաջին կարգի մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 68-4.2-9) անձնագրի 5-րդ կետը շաադրել հետևյալ խմբագրությամբ.

<<5. Բաժնի առաջին կարգի մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի առաջատար մասնագետը>>:

4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործողությունների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ *Վ. ՀԱԿՈԲՅԱՆ*

2014. ապրիլի 2